



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 17 » « գեղարքունիք » 20 19 թ. № 740-Ձ

**ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝**

1. Նշանակել ծառայողական քննություն վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 25-ի N 02/06.7/48155 հանձնարարականը չկատարելու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

- 1) 2019 թվականի հոկտեմբերի 30-ի «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության նիստին ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետի պաշտոնակատար Է. Փիրումյանի չմասնակցելու և «Ջրային ռեսուրսների միասնական տեղեկատվական համակարգի հասանելիություն» հարցը չզեկուցելու պատճառները,

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով.

- 1) Աշոտ Ավայան - գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,
- 2) Նաիրա Ալավերդյան – քարտուղարության պետ,
- 3) Արմինե Հովհաննիսյան – իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 6 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունն անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

12/17/2019

X

ՎԱՀԵ ՋԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

«17» դեկտեմբերի 2019թ.  
ք. Երևան